ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.03.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/11

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Մեգիէլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Տ. Ջիլավյանի, Կ. Դրամբյանի,
«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթ, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 01.03.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգը՝ 1-9-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 01.03.2021թ.-ին:

01.03.2021թ.-ին է www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/11 համարի ծածկագիրը:

10.03.2021թ.-ին, 18.03.2021թ.-ին և 26.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 18.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.03.2021թ.-ին:

2. «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մեգիէլ» ՍՊԸ-ն 01.03.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1 «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության (հետայսու Պատվիրատու) կողմից հայտարարվել է ՆՄԲԳ-ԲՄԱՊՁԲ-21/44 ծածկագրով բաց մրցույթ, որն իրականացվելու է մեկ փուլով:

1.2 Հրավերը հրապարակվել է 15.02.2021թ և մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 02.03.2021թ ժամը 12:00 ներառյալ: Խայտերի բացումը տեղի է ունենալու 02.03.2021թ ժամը 12:00-ին:

1.3 «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ Ընկերություն) ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 ծածկագրով մրցույթին մասնակցելու նպատակով ուսումնասիրելու] հրավերը՝ տեխնիկական բնութագրերում արձանագրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների անհամապատասխանություն:

1.4 Ըստ Ընկերության «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման պահանջին չեն համապատասխանում մրցույթի 1-9 չափաբաժինները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ներկայացված նորմերի վերլուծությունից փաստում ենք, որ գնումների օրենսդրությունը հիմնվում է գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, ապահովելով գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5, Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման (հետայսու՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Վիճարկվող հրավերի տեխնիկական բնութագրերի 1-9-րդ չափաբաժինների նկարագրությունները չեն համապատասխանում նշված նորմի պահանջներին:

Մրցույթի վիճարկվող չափաբաժիններով պահանջվող բժշկական պարագաների տեխնիկական բնութագրերի նկարագրի ձևակերպումները և այդ պարագաների տեսակները ներկայացված են այնպես որոնք տարընկալման և մասնակիցների շրջանակի

սահմանափակում են առաջացնում: Բացի այդ վիճարկվող չափաբաժիններով նշված է հստակ արտադրող, ֆիրմային անվանում և մոդել, որը Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի խախտում է: Ըստ էության Պատվիրատուն նկարագրել է պահանջվող ապրանքը, սակայն միևնույն ժամանակ ներկայացված տեխնիկական բնութագիրը ուղիղ համեմատական է այն ապրանքի չափորոշիչներին որի ֆիրմային անվանմանը հղում է արել Պատվիրատուն

> 1-ին չափաբաժով Պատվիրատուն պահանջում է կաթետեր ախտորոշիչ և կաթետերի ներքին լուսանցքը պետք է լինի 4F; 5F; 5.2F; 6F չափերի: Ըստ էության Պատվիրատուին ներկայացնում է չորս չափ, ինչի պարագայում ապակողմնորոշում կարող է առաջացնել մասնակցի մոտ: Եթե մասնակիցը կարող է հայտ ներկայացնել օրինակ չորս չափերց երկուսով, սակայն պատվիրատուն մի չափաբաժնի տակ ներկայացրել է չորս չափ, ուստի մասնակիցը չի կարող հայտ ներկայացնել օրինակ երկու կամ երեք չափերով, այդ դեպքում Պատվիարատուն կդիտարկի, որ ներկայացված հայտը չի բավարարում տեխնիկական բնութագրին, քանի որ 1-ին չափաբաժնով պահանջվում է չորս չափ:

> Նույն սկզբունքով կազմվել է նաև 2-5 չափաբաժինները այդ չափաբաժիններով պահանջվում է կաթետեր բալոն բժշկական պարագա, և նված են մեկից ավելի տրամագիծ և համապատասխանաբար երկարությամբ պահանջվող ապրանք, ըստ էության դրանք յուրաքանչյուրը առանձին չափաբաժնով պետք է ներկայացվեր, որպեսզի ապահովեր մասնակիցների շրջանակի ընդլայնում, ինչպես նաև այս չափաբաժիններով ևս հղում է արել ֆիրմային անվանմանը և տեխնիկական բնութագրով ներկայացրած չափորոշիչներով ապրանք արտադրում է հենց այդ ֆիրման:

> 6-9 չափաբաժիններով Պատվիրատուն ներկայացրել է ստենդ դեղապատ և մեկ չափաբաժեի ներքո ներառել է մեկից ավել պահանջվող չափեր, օրինակ տրամագիծը 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ, ինչպես նաև հղում է արել ֆիրմային անվանմանը, իսկ տեխնիկական բնութագրով ներկայացրած չափորոշիչներով ապրանք արտադրում է հենց այդ ֆիրման:

Հրապարակված ձևաչափով տեխնիկական բնութագիրը չի բավարարում մեկից ավելի հնարավոր մասնակիցների մասնակցությունը, եթե մասնակիցը կարող է ընթացակարգին մասնակցել օրինակ մի կամ երկու չափի ստենտով կամ կաթետեր ախտորոշիչով կամ բալոնով, սակայն մի չափաբաժնով պահանջվում են մի քանիսը, ապա արհեստականորեն սահմանափակվում է մասնակիցների շրջանակի ընդլայնումը:

Այսպիսով, վերը ներկայացված չափաբաժինների տեխնիկական բնութագրերը ներկայացված են նույն տրամաբանության մեջ: Մեկ չափաբաժնով պահանջվում է

բուժպարագա տարբեր չափերի: Պատվիրատուն պետք է յուրաքանչյուր չափը ներկայացներ առանձին չափաբաժնով, որպեսզի ապահովեր հնարավոր մասնակիցների մասնակցությունը և բացառվեր չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Պատվիրատուի ներկայացրած տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում օրենքով սահմանված նորմերին և հայտատուի համար ստեղծում են ապակողմնորոշող իրավիճակ:

Բացի այդ Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը հստակ նշում է որ հղում կարող է արվել բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգը՝ 1-9-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

«Մեգիէլ» ՍՊԸ-ն 18.03.2021թ.-ի ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«ԳԲՔԱ-ԼՕ-2021/11 ծածկագրով քննվող քողքի առնչությամբ հավելում ենք հետևյալը.

Ներկայացուցչի դիտարկումը բողոքարկվող չափաբաժինների մասով, այն որ չի կարող ներկայացնել չափերը առանձին չափաբաժիններով, ինքն իսկ հերքեց նախորդ նիստի ժամանակ, հայտնելով, որ յուրաքանչյուր չափի ապրանք Պատվիրատուն ընդունում է անհատական թվային կոդով: Սա հավաստումն է, որ Պատվիրատուի համար այնուամենայնիվ կանխատեսելի են և առկա է հստակ վիճակագրություն, թե որ չափի և ձևի բուժ պարագան ինչ քանակով է օգտագործվում հիվանդանոցի կողմից: Ավելին այդ վիճակագրությունը կարող է ունենալ Պատվիրատուն իր կնքած պայմանագրերով և դրանց շրջանակում կատարած պատվերներով: Պատվիրատուն իր դիտարկման մեջ իրեն հակասում է հենց նույն ընթացակարգով տեխնիկական բնութագրի 9-րդ չափաբաժնի վկայմամբ: Նշված չափաբաժնով պահանջվում է ստենտ դեղապատ երկար 12 հատ, այսինքն հստակ է իր սպառման թիվը: Ավելին նախորդ նիստում հայտարարեց, որ հիվանդանոցը ապրանքատեսակների 2 ամսվա մնացորդ է հիմնականում ունենում և այն հայտարարությունը, որ անհնարին է կանխատեսել կրկին հերքվում է:

Մոդելների և արտադրողին հղում անելու վերաբերյալ ներկայացուցիչը հայտարարեց, որ դա ուղեցույցի նպատակ է հետապնդում, հարց - ինչ ուղեցույց կամ ում նկատի ունի: Մոդելին, ապրանքային նշանին հղում անելու իրավասություն տրված է օրենքով բացառապես մեկ դեպքում, այն է տեխնիկական բնութագիրը ներկայացնելու անհնարինության դեպքում,

սակայն վիճարկվող տեխնիկական բնութագրից ակնհայտ է, որ անհնար չի եղել այն ներկայացնել և միևնույն ժամանակ արձանագրում ենք, որ ներկայացվածը նկարագրում է հենց տվյալ արտադրողի թողարկմանը:

Ներկայացված չափաբաժինների քանակի առումով, օրինակ 1-ին չափաբաժնով պահանջվում է 2000 հատ ախտորոշիչ կաթետր 4 չափերի և բազմաթիվ տեսակների, մասնակցի համար անկանխատեսելի է, թե Պատվիրատուն երբ, որ չափից և որ տեսակից պատվեր կներկայացնի, որի չմատակարարման դեպքում Պատվիրատուի համար հիմք է ստեղծվում մատակարարին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելուն, այն էլ երբ մատակարարման ժամկետ է սահմանված 5 աշխատանքային օր: Նշված ընթացակարգից խուսափելու միակ միջոցը ստացվում է, որ մասնակիցը նշված չափերի և բազմաթիվ ձևերի ապրանքներից յուրաքանչյուրից պետք է պահեստավորած ունենա 2000 հատ, այլ կերպ չենք կարող հասկանալ սույն տեխնիկական բնութագիրը:»:

Ներկայացված լրացմամբ Ընկերությունը, հստակեցնելով բողոքի պահանջը, Բողոքներ քննող անձին խնդրել է՝

պարտավորեցնել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգը՝ 1-9-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած

կամ

պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին փոփոխություններ կատարել հրավերի 1-9-րդ չափաբաժիններում՝ բողոքով ներկայացված հիմնավորումներով և վերլուծությամբ:

3. <u>«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 03.03.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/3112-2021 գրությամբ դիմել է «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 01.03.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 05.03.2021թ.-ին թիվ 08-132 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ 26.02.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/11 ծածկագրով բողոքի, հայտնում ենք հետևյալը.

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է հետևյալը.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք,

այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

«1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:»

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:»

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է հետևյալը.

2. Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 4-րդ կետը սահմանում է.

Գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Պատվիրատուն հանդիսանում է մասնագիտացված բժշկական կենտրոն, հիմնականում իրականացնում է սրտի վիրաբուժության հետ կապված ծառայություններ: Պատվիրատուն իր բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ ապրանքների պլանավորումն ու քանակների սահմանումն իրականացնում է նախորդ տարվա բժշկական միջամտությունների քանակի և դրանց ընթացքում իրականացված ապրանքների ծախսի հիման վրա: Եթե նախորդ տարում, օրինակ կենտրոնն իրականացրել է պայմանական թվով ստենտավորման և փականային վիրահատություն, ապա դա այն բազային տվյալն է, որը հաշվի է առնվում գնման պլանը, ինչպես նաև ծախսերի և եկամուտների նախահաշիվը կազմելիս: Հրավերով նախատեսված ապրանքներն ունեն այնպիսի առանձնահատկություն, որը թույլ չի տալիս նախօրոք կանխատեսել կիրառման ենթակա ապրանքի կոնկրետ չափը և ձևը: Այսինք, կիրառման ենթակա ախտորոշիչ կաթետրի չափը և ձևը պարզ է դառնում հենց հիվանդի ախտորոշման ընթացքում, և այդ պահին հիվանդի կյանքին վտանգ սպառնացող իրավիճակ չունենալու համար Պատվիրատուն պետք է ունենա բոլոր հնարավոր չափերի և ձևերի առկայություն պահեստում: Նույն առանձնահատկությունը առկա է նաև Հրավերով նախատեսված բոլոր այն ապրանքների համար, որոնց բնութագրերում խմբավորված են տարբեր չափեր և (կամ) ձևեր: Տվյալ ապրանքների չափերի վերաբերյալ բժշկական ցուցումը պարզվում է հենց միջամտության ընթացքում: Այս առանձնահատկությունից ելնելով Պատվիրատուները չեն կարող ըստ առանձին չափերի և ձևերի կատարել քանակական կանխատեսումներ, ուստի և իրականացնել ճշգրիտ պլանավորում ծախսերի և եկամուտների նախահաշվի շրջանակներում: Հակառակ դեպքում պետք է անորոշ շատ քանակներով իրականացվի պլանավորում բոլոր չափերի մասով, ինչը հանգեցնելու է տարեկան եկամուտների և

ծախսերի նախահաշվի բացասական սալդոյի ձևավորմանը, երբ նույն եկամուտների պարագայում անհամաչափ մեծանալու է ծախսային բաղադրիչը: Նման իրավիճակը հակասում է Օրենքով նախատեսված Պատվիրատուի կարիքին համապատասխան գնում կատարելու պահանջին:

ՀՀ-ում գործող բոլոր բժշկական կենտրոնները, որոնք մատուցում են նմանատիպ ծառայություններ, Հրավերով նախատեսված ապրանքների գնման նպատակով ընթացակարգերը հայտարարում են նույն տրամաբանությամբ: Բացի այդ բոլոր արտադրողները, նրանց ներկայացուցիչները կամ դիստրիբյուտորները իրենց կողմից ներկայացվող ապրանքների համար ապահովում են ամբողջ ապրանքային շարքը՝ համապատասխան բոլոր չափերով և ձևերով: Միաժամանակ անկախ ապրանքի չափերից միշտ նույնն են ապրանքի ինչպես ձեռքբերման, այնպես էլ վաճառքի գները: Ուշագրավ է նաև այն փաստը, որ Ընկերությունը բողոքարկել է Հրավերի 1-ից 9-րդ չափաբաժինները, սակայն 10-13 չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերը կազմված են նույն տրամաբանությամբ, ինչ-որ 1-9 չափաբաժինները: Մասնավորապես՝ 12-րդ չափաբաժնով նախատեսված է հետևյալը «արտալ փականի չափերը՝ 21, 23, 25, 27 և 29մմ ըստ պատվերի, միտրալ փականի չափերը՝ 27, 29, 31 և 33մմ ըստ պատվերի», 13-րդ չափաբանով հետևյալը՝ «արտալ փականի չափերը 21, 23, 25 և 27 ըստ պատվերի, միտրալ փականի չափերը՝ 27, 29, 31 և 33մմ ըստ պատվերի»:

Նշված երկու չափաբաժիններով նախատեսված ապրանքների մասով Ընկերությունը բողոք չի ներկայացրել, քանի որ այդ ապրանքների մասով հենց բողոքաբերը տարիներ շարունակ մասնակցել է գնման ընթացակարգերին, կնքել պայմանագրեր և դրանց շրջանակներում մատակարարել ապրանքները ըստ Պատվիրատուի մատնանշած կոնկրետ չափի: Նման վարքագծով Բողոքաբերն ուղղակի ապացուցում է, որ ցանկացած արտադրողի ապրանքային շարքը ներկայացնելիս, որևիցէ մի ընկերություն չունի համարներից կախված սահմանափակում, ինչը նաև հիմնավորում է բողոքի անհիմն լինելը:

Մասնակցի այն պնդումը, որ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերը չեն ապահովում մեկից ավելի հնարավոր մասնակիցների մասնակցություն, ինչպես նաև նկարագրում են միայն մեկ արտադրողի (հրավերով նշված) ապրանք, անհիմն է, քանի-որ ընթացակարգին կարող են մասնակցել ինչպես ռեզիդենտ, այնպես էլ ոչ ռեզիդենտ ընկերություններ, որոնք ունեն հնարավորություն ներմուծել ապրանքը ցանկացած երկրից, ապրանքներ արտադրող ցանկացած կազմակերպություն ունի անկասկած մեկից ավելի ներկայացուցիչներ, դիստրիբյուտորներ: Բացի այդ հրավերով նշված ֆիրմային անվանման

հետ միասին Պատվիրատուն կիրառել է «կամ համարժեք» արտահայտությունը, ընդ որում մասնակիցների առաջարկները գնահատվելու են հրավերով նշված կոնկրետ տեխնիկական ցուցանիշների համեմատությամբ: Ինչ վերաբերվում է տեխնիկական հատկանիշներին, ապա Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, դրանք պետք է լինեն հնարավորինս հստակ և մանրակրկիտ նկարագրված: Նման պարագայում անհնար է նկարագրել ստենտը կամ կաթետրը, առանց ներկայացնելու դրա հնարավոր բոլոր չափերը և ձևերը:

Ապրանքների վերոնշյալ առանձնահատկությունների և ըստ համարների քանակների անկանխատեսելիության մասով, որպես պաշտոնական պարզաբանում Ձեզ ենք տրամադրում ՀՀ ԱՆ նախարարի 22.07.2016թ. թիվ ԱՄ/06.1/8130-16 գրությունն ուղղված ՀՀ ֆինանսների նախարարին և ֆինանսների նախարարության պատասխանը ՀՀ Առողջապահության նախարարությանը:»:

Ելնելով վերագրյալից՝ Պատվիրատուն Բողոքներ քննող անձին հայտնել է, որ բողոքը հիմնավոր չէ:

Պատվիրատուն 18.03.2021թ.-ին թիվ 08-144 գրությամբ ներկայացված դիրքորոշման լրացմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ի լրումն ԳԲՔԱ-ԼՕ-2021/11 ծածկագրով բողոքի շրջանակներում մեր ներկայացրած դիրքորոշման, հայտնում ենք հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

<<Գործարար շրջանառության սովորույթ է համարվում ձեռնարկատիրական գործունեության որևէ բնագավառում ձևավորված և լայնորեն կիրառվող օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի կանոնը, անկախ դրա՝ որևէ փաստաթղթում ամրագրման հանգամանքից:>>

Գտնում ենք, որ հնարավոր մասնակիցների տարիներ շարունակ ձևավորած վարքագիծը գործարար սովորույթ է, որը հավաստում է այդ մասնակիցների կողմից այս կամ այն արտադրողի նույն ապրանքի (օրինակ՝ Դեղապատ ստենտ) ամբողջ ապրանքային շարքը ներկայացնելու օրինաչափությունը:

Ս.թ. 03.03.2021թ <<Մեգիէլ>> ՍՊԸ-ն <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ-ին է ներկայացրել գնային առաջարկ, որով ընկերությունը ոչ թէ ապրանքի որևէ կոնկրետ ձևի և չափի համար է առաջարկ անում, այլ այն վերաբերվում է ապրանքի կոնկրետ մոդելին, անկախ դրա չափից կամ ձևից, այսինքն՝ արտադրողի կողմից արտադրվող ամբողջ շարքին (առաջարկը կցվում է՝ գնային հատվածը քողարկված): Միաժամանակ մասնակիցը առաջարկում նշել է նաև, որ կախված քանակից գները ենթակա են վերանայման 5-10%-ի

չափով, ինչը ապացուցում է շուկայում ձևավորված այն մոտեցումը, որ ապրանքի վաճառքի քանակների ավելացման հետ մեկտեղ առաջարկվող գինը ավելի նվազում է, ոչ թե աճում: Այս հանգամանքը ուղղակիորեն ապացուցում է այն, որ գնման ընթացակարգի շրջանակներում նույն ապրանքները՝ չափերից և ձևերից անկախ, նույն չափաբաժնում խմբավորելով Պատվիրատուն ոչ թե առաջացնում է ֆինանսական միջոցների անտեղի վատնման իրավիճակ, այլ ընդհակառակը, հանգեցնում է ավելի մրցունակ գների ձևավորման:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 2021թ. փետրվար ամսին կազմակերպել է ԳՀԱՊՁԲ-2021/16-4-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգ, որի 4-րդ չափաբաժնով նախատեսված է հետևյալ բնութագրերով դեղապատ ստենտ. <<Դեղապատ ստենտ, դեղը Զոտարոլիմուս, իրենից ներկայացնում է շարունակական չընդհատվող սինուսային հյուսվածք, որը հնարավորություն է տալիս խուսափել թե վիրահատության ժամանակ թե հետվիրահատական շրջանում ստենտի հետագա դեֆորմացիայից: Ստենտի նյութը՝ կոբալտ քրոմ, ստենտի նյութի հաստությունը ոչ ավել, քան՝ 0.091մմ, դեղանյութի ավելի քան 85% արտազատվում է մինչև 60 օրում, ամբողջական մինչև 180 օրում: Ստենտի ջաղերի միջև եղած տրամագիծը ոչ ավել, քան՝ 0.77մմ: Աշխատաքային երկարությունը՝ ոչ պակաս, քան՝ 140սմ: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի վնասվածքի չափից ստենտի պահանջվող չափսերն են ըստ երկարության՝ 9մմ, 12մմ, 14մմ(2.25մմ-2.75մմ), 15մմ(3.0մմ-4.0մմ), 18մմ, 22մմ, 26մմ, 30մմ, 34մմ, 38մմ: Կախված վիրահատվող անոթի տրամագծից ստենտի պահաջվող չափերն են ըստ տրամագծերի՝ 2,25մմ, 2,5մմ, 2,75մմ, 3,0մմ, 3,5մմ, 4,0մմ.....>>:

Նշված, ինչպես նաև ընթացակարգի այլ չափաբաժիններին, որոնց բնութագրերի կազմման մոտեցումը նույնն է, մասնակցել է <<Մեգիէլ>> ՍՊԸ-ն և ներկայացրել գնային առաջարկ: Նույն իրավիճակն է նաև <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի կողմից հայտարարված ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/31 ծածկագրով ընթացակարգում, որին նույնպես մասնակցել է <<Մեգիէլ>> ՍՊԸ-ն /արձանագրությունները հրապարակված են տեղեկագրում/: <<Մեգիէլ>> ՍՊԸ-ն, ինչպես նաև բոլոր մասնակիցները, տարիներ շարունակ նույն ձևով են մասնակցել բոլոր Պատվիրատուների կողմից նմանատիպ ապրանքների գնման համար հայտարարված ընթացակարգերին:

Այս բոլոր փաստերը հավաստում են այն, որ նմանատիպ առանձնահատկություններով (ինչպես նշել էինք նախորդ գրությամբ) ապրանքները նույն չափաբաժնում խմբավորելը հիմնավոր է, և այդ փաստը ամենևին չի խոչընդոտում

մասնագիտական փորձառություն ունեցող մասնակցի այդ չափաբաժնին մասնակցելուն և արտադրողի ամբողջ ապրանքային շարքը ներկայացնելուն: Հարկ ենք համարում շեշտել, որ ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս նույն սկզբունքով են իրականացվում գնումները Հայաստանի Հանրապետությունում՝ և պետական և մասնավոր հատվածում:

Որպես ըստ չափերի ճշգրիտ կանխատեսման անհնարինության փաստարկ, կից ներկայացնում ենք նաև վերջին երկու տարիների ընթացքում բժշկական կենտրոնի կողմից գնված ապրանքներից պատահական ընտրանքային կարգով մի քանիսի թվային ցուցանիշները, որտեղից ակնհայտ երևում է քանակների անհամաչափ և էական տատանումները: Դա ևս փաստում է այն, որ հնարավոր չէ ըստ չափսերի Պատվիրատուի կարիքին համապատասխան քանակների կանխատեսումը:»:

Պատվիրատուն լրացմանը կից ներկայացրել է «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 15.02.2021թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի գնման հայտը և ՀՀ ֆինանսների նախարարի շրջաբերական գրության պատճենը:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/11 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 15.02.2021թ.-ին հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 02.03.2021թ.-ին ժամը 12:00-ն ներառյալ:

iii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 1-ից 9-րդ չափաբաժինների մասով սահմանվել է հետևյալը.

1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Կաթետր ախտորոշիչ»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Կաթետրի նյութը նեյլոն/պոլիուրետան, պողպատյա հյուսապատում, որը օժտում է կաթետերին ամրությամբ և ռենտգենկոնտրաստությամբ: Նյութը ապահովում է կաթետրի ճկունությունը*

ըստ համապասխան անոթիունի: Ունի չվնասող, ռենտգենկոնտրաստ դիստալ ծայր, կաթետերի ներքին լուսանցք է՝ 4F; 5F; 5.2 F; 6F մաքսիմալ ճնշումը 1200psi: Արյան ծավալային հոսքի արագությունն է 16,7 մլ/վ - 4F; 21,3 մլ/վ- 5F; 21 մլ/վ- 5,2F, 35 մլ/վ- 6F. կաթետերի համար: Կաթետերի ծայրի ձևերը՝ JL 3,5; JL4; JL4,5; JL5; JL6; AL1; AL2; AL3; JR3,5; JR4; JR4 MOD; JR5; JR5 MOD; JR6; AR MOD; AR1 MOD; AR2 MOD; 3DRS; SRC; MPA1; MPA1; MPB2; MPB3; SON1; SON2; SON3; CAS1; CAS2; CAS3; BARBEAU; EGB1; EGB2; EGB3; LCB; RCB; IM; PIG; PIG145; PIG155; NIH;UNIV; STR; C1; C2; C3; Renal Double Curve Small; Renal Double Curve Adult; Shepherd Hook 1; Shepherd Hook 2;Celiac Trunk; Uni Select; J-Curvel; J-Curvel 1; J-Curvel 2; SIM1; SIM2; SIM3; SIM4; H1; H3; HN3; HN4; MAN; BERN; BERN 2; JB1; JB2; JB3; VERT; N.I.H., RBL Կաթետերի երկարությունը 65 սմ; 80սմ; 100սմ; 125սմ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»: Արտադրողի և ապրանքային նշանի անվանում նշվել է՝ *«Ջոնսոն և Ջոնսոն, CARDINAL HEALTH NFINITY/SUPER TORQUE»:* 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 2000 հատ:

2-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Կաթետր բալոն»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Սրտանոթային բալոն-կաթետերներ RX կամ NC տիպի, կազմված է կարմիր գույնի սրածայր նեյլոնե դիստալ մասից, ունի ռենտգենոկոնտրաստ նշանակիրներ, երկսեգմենտային շաֆթ՝ ճկուն դիստալ մասով և կոշտ միջին և պրոքսիմալ մասերով: Ծայրի պրոֆիլը՝ 0.017''/0.43 մմ, բալոնի ծածկույթը՝ հիդրոֆիլիկ, շաֆթի ծածկույթը՝ հիդրոֆիլիկ: RX-Push մոդիֆիկացիայում, շաֆթը ներկայացված է միայն կոշտ դիստալ, միջին և պրոքսիմալ մասերով: NC-Բալոնի նյութը՝ OptiQ, դիստալ շաֆթի պրոֆիլը՝ 2.4F-2.7F, պրոքսիմալ շաֆթի պրոֆիլը՝ 2.1F-2.3F: Նոմինալ ճնշում RX/NC՝ 6/12 մթն. պայթման ճնշումը՝ 12 -20 մթն. կախված չափերից: Բալոնի երկարությունները՝ 6, 8, 12, 15, 20, 30 մմ., տրամագծերը՝ 1.2, 1.5, 2.00, 2.25, 2.50, 2.75, 3.00,3.25, 3.50, 3.75, 4.00, 4.5, 5.0 մմ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում նշվել է՝ *«Բոստոն Սայենտիֆիկ»:* 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 150 հատ:

3-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Կաթետր բալոն»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Բալոնային կաթետր սրտանոթային բալոն-կաթետերներ RX կամ NC տիպի,*

0,014”, կաթետրի երկարությունը՝ 145/143 սմ: Բալոնի նյութը՝ Պեբակս: Կրկնակի հիդրոֆիլային ծածկույթ: Բալոնի կրկնակի շերտ՝ 2,25-5,0մմ չափսերի համար: Բալոնի նոմինալ բացման ճնշումը՝ 8/12 մթն, պայթման առավելագույն ճնշումը՝ 14/18 մթն, ծայրի պրոֆիլը՝ 0,017” (0.43) / 0,018” (0.45), ծայրի երկարությունը՝ ոչ ավել 3,74 մմ, շաֆթի պրոքսիմալ/դիստալ մասի տրամագիծը՝ 2,1/2,5F: Շաֆթի մեջ ինտեգրված վոլֆրամային ռենտգեն-կոնտրաստ նշանակիրներ 1,0/1,1 մմ երկարությամբ: Տրամագիծը-1,2,1.5, 2.0, 2.25, 2.5,2.75, 3.0, 3.25, 3.5, 3.75, 4.0, 4.5, 5.0 մմ, երկարությունը - 6, 8, 12, 15, 20, 25, 30 մմ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»: Արտադրողի և ապրանքային նշանի անվանում նշվել է՝ *«Էբբոտ, TREK»:* 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 50 հատ:

4-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Կաթետր բալոն»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Կաթետր բալոն չընդլայնվող գնդանոթով հիդրոֆիլիկ ծածկույթով, RX կամ բարձր ճնշման: Կաթետրերի երկարությունը 145սմ, բալոնը եռաթև, ճնշումը՝ 608 ԿՊա-2026ԿՊա, ծայրի պրոֆիլը՝ 0,40-0.43մմ, տրամագծերը՝ 1.25 ;1.5 ; 2.0; 2.25; 2.5; 2.75; 3.0; 3.25; 3.5; 4.0; 4.5; 5.0 մմ, երկարությունը՝ 6, 10; 15; 20; 30; 40 մմ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում նշվել է՝ *«Տերումո, Ryujin/Accuforce»:* 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 400 հատ:

5-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Կաթետր բալոն»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Կաթետր բալոն չընդլայնվող գնդանոթով հիդրոֆիլիկ ծածկույթով OTW տիպի: Տրամագծերը՝ 1.25; 1.5; 2.0; 2.5մմ, երկարությունը՝ 10; 15; 20մմ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում նշվել է՝ *«Տերումո, Ryujin OTW»:* 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 20 հատ:

6-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Ստենտ դեղապատ»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Դեղը Սիրոլիմուս, որով պատված է միայն ստենտի անցումային*

մասերը, կապերի վրա դեղ չկա, որը նպաստում է ավելցուկի պակասեցմանը: Ստենտի նյութը կոբալտ քրոմ, բաց դիզայն, ստենտի նյութի հաստությունը մինչև 80μm, ստենտի ճաղերի բացվածքը 131 աստիճանից ոչ ավել, դեղի դոզան մինչև 3.9μg/mm պոլիմեր DL-lactide-co-caprolactone, դեղով պատված է միայն ստենտի արտաքին մասը: Պոլիմերը վերանում է 3-4ամսվա ընթացքում, ստենտի բալոնը եռաթև, Nylon 12 նյութից: Մուտքի տրամագիծը՝ոչ ավել 0.43մմ, փակված վիճակում ստենտի տրամագիծը 1.12մմ- 3.0մմ տրամագծի դեպքում: Դիստալ հատվածը հիդրոֆիլիկ ծածկույթ է , պրոքսիմալ հատվածը սիլիկոնե ծածկույթ: Մատակարարման համարակգի աշխատաքային երկարությունը ոչ պակաս 140սմ: Երկարությունը՝ 9մմ, 12մմ, 15մմ, 18մմ, 24մմ, 28մմ, 33մմ, 38մմ; տրամագծերը՝ 2,25մմ, 2,5մմ, 2,75մմ, 3,0մմ, 3,5մմ, 4,0մմ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»: Արտադրողի և ապրանքային նշանի անվանում նշվել է՝ *«Տերումո, Ultimaster»:* 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 400 հատ:

7-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Ստենտ դեղապատ»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Լազերով կտրված կոբալտ-քրոմի համաձուլվացքից (L-605) կազմված գլան, ստենտի ծածկը՝ էվերոլիմուս դեղանյութ արտազատող ծածկ: 2.25-3.0 մմ տրամագծով ստենտը ունի երեք կարճ և երեք երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: 3.5-4.0 մմ-ոց ստենտը ունի երեք կարճ և վեց երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: Ստենտի եզրային օղը ձևավորված է սիմետրիկ ամրակներով: Ստենտի պատերի հաստությունը՝ ոչ ավել քան, քան 0.0032”:: Ստենտը ֆեռոմագնիսական չէ: Տրամագծերը՝ 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.25, 3.5, 4.0 մմ: Երկարությունները ՝ 8, 12, 15, 18, 23, 28, 33, 38 մմ : Բացման նոմինալ ճնշումը՝ 11 atm, պայթման առավելագույն ճնշումը՝ 18 atm: Բալոնի նյութը՝ բազմաշերտ պեբաքս: Ստենտի դեղորայքային ծածկը բաղկացած է ակրիլային և ֆլուորո պոլիմերներից: Դեղանյութի կոնցենտրացիան ստենտի մակերեսին՝ 100 մկգ/սմ2: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում նշվել է՝ *«Էբբոտ, Xience PRO»:* 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 200 հատ:

8-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Ստենտ դեղապատ»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Ստենտը՝ քրոմի և պլատինի խարնուրդ, դեղածածկույթը՝*

Էվերոլիմուս, մուտքի տրամագիծը՝ոչ ավել քան 0.46 մմ, փակված վիճակում ստենտի տրամագիծը 0.040 դմ., դիսպալ հատվածը՝ հիդրոֆիլ ծածկույթ է, նոմինալ ճնշումը՝ ոչ պակաս քան 11 atm, պայթման ճնշումը՝ 16-ից ոչ պակաս և ոչ ավելի քան 18 atm, մատակարարման համարակգի աշխատաքային երկարությունը ոչ պակաս քան 144 սմ Exchange (RX): Ստենտի երկարությունը՝ 8մմ, 12մմ, 16մմ, 20մմ, 24մմ, 28մմ, 32մմ, 38մմ; Տրամագծերը՝ 2,25մմ, 2,5մմ, 2,75մմ, 3,0մմ, 3,5մմ, 4,0մմ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»: Արտադրողի և ապրանքային նշանի անվանում նշվել է՝ *«Բոստոն Սայենտիֆիկ, Promus»:* 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 150 հատ:

9-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Ստենտ դեղապատ երկար»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Ստենտի նյութը – կոբալտի-քրոմի համաձուլվացք (L-605) և երկու պոլիմերներից և բջիջների պրոլիֆերացիան ընկճող դեղից կազմված էվերոլիմուս արտազատող ծածկ: Ստենտի կառուցվածքը - ստենտը լազերով կտրված կոբալտ-քրոմային գլան է: Ստենտի եզրային օղը ձևավորված է սիմետրիկ ամրակներով՝ բարելավելու ուղղորդիչ կաթետերի դուրսբերումը: Ստենտի պատերի հաստությունը - ոչ ավել քան 0.0032”: Ֆեռոմագնիսական չէ: Ստենտի կարճացումը չի գերազանցում ստենտի երկարության 5%: Տրամագծերը - 2.5, 2.75, 3.0, 3.5 մմ, երկարությունը 48 մմ: Ստենտի բացման նոմինալ ճնշումը՝ 11 atm: Ստենտի դեղորայքային ծածկը բաղկացած է ակրիլային և ֆլուորո պոլիմերներից, որոնք օգտագործվում են են անոթային կարի համար նախատեսված թելերի արտադրությունում: Դեղանյութի կոնցենտրացիան ստենտի մակերեսին կազմում է 100 մկգ/սմ2: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում նշվել է՝ *«Էբբոտ, Xience Xpedition Long»:* 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 12 հատ:

iv. Հավելված 1-ով սահմանվել է նաև ընդհանուր պայմաններ, համաձայն որի՝ բնութագրերում գնման առարկայի առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին պետք է հասկանալ «կամ համարժեքը» բառերը:

Մատակարարման ժամկետները և քանակները. Պայմանագրի շրջանակներում Ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2021թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների, ընդ որում յուրաքանչյուր պատվերի առավելագույն քանակը չի կարող լինել ավելի պայմանագրի ընդհանուր քանակի 1/2-ից, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրից շուտ, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Փաստացի կարիքից ելնելով նախատեսված քանակները կարող են ամբողջությամբ չպատվիրվել Պատվիրատուի կողմից և այդ մասով պայմանագիրը համարվում է լուծված հաշվարկային տարվա ավարտով: Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր, գործարանային փաթեթավորմամբ, պիտանելիության ժամկետները՝ հանձնման պահին առնվազն 75%-ը, բացառությամբ այն դեպքերի, երբ Պատվիրատուն կարիքից ելնելով համաձայնում է ընդունել ավելի կարճ ժամկետով ապրանք:

Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը, բեռնաթափումը և տեղափոխումը մինչև համապատասխան պահեստ, իրականացվում է Կատարողի ուժերով և միջոցներով ք. Երևան, Արմենակյան 108/4 հասցեով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 01.03.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ … կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների

առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 15.02.2021թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով 1-ից 9-րդ չափաբաժինների մասով սահմանվել է ապրանքի անվանումը և ապրանքային նշանը, տեխնիկական բնութագիրը, արտադրողի և ապրանքային նշանի անվանում և 2021թ.-ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար անհատապես: Ինչպես նաև նույն հավելված 1-ով սահմանվել է ընդհանուր պայմաններ, առ այն, որ բնութագրերում գնման առարկայի առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին պետք է հասկանալ «կամ համարժեքը» բառերը: Պայմանագրի շրջանակներում Ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2021թ.-ի տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների, ընդ որում յուրաքանչյուր պատվերի առավելագույն քանակը չի կարող լինել ավելի պայմանագրի ընդհանուր քանակի 1/2-ից, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրից շուտ, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում: Փաստացի կարիքից ելնելով նախատեսված քանակները կարող են ամբողջությամբ չպատվիրվել Պատվիրատուի կողմից և այդ մասով պայմանագիրը համարվում է լուծված հաշվարկային տարվա ավարտով: Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր, գործարանային փաթեթավորմամբ, պիտանելիության ժամկետները՝ հանձնման պահին առնվազն 75%-ը, բացառությամբ այն դեպքերի, երբ Պատվիրատուն կարիքից ելնելով համաձայնում է ընդունել ավելի կարճ ժամկետով ապրանք:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն

ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստական հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց

պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Ամբողջ վերոգրյալների ու սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Պատվիրատուն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի հրավերը՝ 1-ից 9-րդ չափաբաժինների մասով պետք է փոփոխել կամ դրա անհնարինության դեպքում հայտարարել չկայացած:

Անդրադառնալով Պատվիրատուի կողմից մրցույթի հրավերով առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորելու վերաբերյալ բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Վերոնշյալ հոդվածի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաների խմբավորումը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը, և միևնույն ժամանակ, սույն դրույթը քննարկելով գնումների օրենսդրության համատեքստում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ խմբավորումը չպետք է հանգեցնի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցության սահմանափակմանը, քանի որ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ:

Ամբողջացնելով վերոնշյալները՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ նախ և առաջ՝ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորելու հարցի քննարկումը պետք է դիտարկել Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և Կարգի 22-րդ կետի համատեքստում, այնուհետև՝ դիտարկել այն որպես առանձին իրավակարգավորող դրույթ՝ անդրադառնալով հիմնավորվածությանն ու օրինաչափությանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Պատվիրատուն բողոքի վեճի առարկան հանդիսացող մրցույթի 1-9 չափաբաժիններով սահմանված առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները խմբավորել է մեկ չափաբաժնում և սահմանել արտադրողի և ապրանքային նշանի անվանում:

Որպես Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթների կիրառման հիմնավորում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին է ներկայացրել ՀՀ ԱՆ նախարարի 22.07.2016թ.-ի թիվ ԱՄ/06.1/8130-16 գրության ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված գրությունը, առ այն, որ հաշվի առնելով այն հանգամանք, որ տվյալ դեպքում Գրության մեջ նշված գնման առարկաների մասով տարվա ընթացքում առկա է լինում փաստացի կարիքի փոփոխություն, առաջարկել են այդ գնման առարկաների գնման գործընթացը կազմակերպել դրանց համար գնումների պլանով հաստատված /կամ գնումների պլանում համապատասխան գումարը ներառելիս դրա հաշվարկի հիմքում ընկած/ ամբողջ քանակի համար՝ հրավերով նախատեսելով, որ մասնակիցները պետք է գնային առաջարկը ներկայացնեն այդ խմբաքանակի համար, իսկ գնման առարկաները փաստացի կմատակարարվեն՝ ըստ պաավիրատուի կողմից ներկայացվող պահանջի:

Ինչպես նաև Պատվիրատուն ներկայացված բողոքի դիրքորոշմամբ հայտնել է, որ վերջինս հանդիսանում է մասնագիտացված բժշկական կենտրոն, հիմնականում իրականացնում է սրտի վիրաբուժության հետ կապված ծառայություններ: Պատվիրատուն իր բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ ապրանքների պլանավորումն ու քանակների սահմանումն իրականացնում է նախորդ տարվա բժշկական միջամտությունների քանակի և դրանց ընթացքում իրականացված ապրանքների ծախսի հիման վրա: Եթե նախորդ տարում, օրինակ կենտրոնն իրականացրել է պայմանական թվով ստենտավորման և փականային վիրահատություն, ապա դա այն բազային տվյալն է, որը հաշվի է առնվում գնման պլանը, ինչպես նաև ծախսերի և եկամուտների նախահաշիվը կազմելիս: Հրավերով նախատեսված ապրանքներն ունեն այնպիսի առանձնահատկություն, որը թույլ չի տալիս նախօրորք կանխատեսել կիրառման ենթակա ապրանքի կոնկրետ չափը և ձևը: Այսինք, կիրառման ենթակա ախտորոշիչ կաթետրի չափը և ձևը պարզ է դառնում հենց հիվանդի ախտորոշման ընթացքում, և այդ պահին հիվանդի կյանքին վտանգ սպառնացող իրավիճակ չունենալու համար Պատվիրատուն պետք է ունենա բոլոր հնարավոր չափերի և ձևերի առկայություն պահեստում: Նույն առանձնահատկությունը առկա է նաև Հրավերով նախատեսված բոլոր այն ապրանքների համար, որոնց բնութագրերում խմբավորված են տարբեր չափեր և (կամ) ձևեր: Տվյալ ապրանքների չափերի վերաբերյալ բժշկական ցուցումը պարզվում է հենց միջամտության ընթացքում: Այս առանձնահատկությունից ելնելով Պատվիրատուները չեն կարող ըստ առանձին չափերի և ձևերի կատարել քանակական կանխատեսումներ, ուստի և իրականացնել ճշգրիտ պլանավորում ծախսերի և եկամուտների նախահաշվի շրջանակներում: Հակառակ դեպքում պետք է անորոշ շատ քանակներով իրականացվի պլանավորում բոլոր չափերի մասով, ինչը հանգեցնելու է տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվի բացասական սալդոյի ձևավորմանը, երբ նույն եկամուտների պարագայում անհամաչափ մեծանալու է ծախսային բաղադրիչը: Նման իրավիճակը հակասում է Օրենքով նախատեսված Պատվիրատուի կարիքին համապատասխան գնում կատարելու պահանջին: ՀՀ-ում գործող բոլոր բժշկական կենտրոնները, որոնք մատուցում են նմանատիպ ծառայություններ, Հրավերով նախատեսված ապրանքերի գնման նպատակով ընթացակարգերը հայտարարում են նույն տրամաբանությամբ: Բացի այդ բոլոր արտադրողները, նրանց ներկայացուցիչները կամ դիստրիբյուտորները իրենց կողմից ներկայացվող ապրանքների համար ապահովում են ամբողջ ապրանքային շարքը՝ համապատասխան բոլոր չափերով և ձևերով: Միաժամանակ

անկախ ապրանքի չափերից միշտ նույնն են ապրանքի ինչպես ձեռքբերման, այնպես էլ վաճառքի գները:

Ընկերությունն իր բողոքով և լրացմամբ, որպես Պատվիրատուի կողմից ներկայացված հիմավորման հակափաստարկ հայտնել է, որ հրապարակված ձևաչափով տեխնիկական բնութագիրը չի բավարարում մեկից ավելի հնարավոր մասնակիցների մասնակցությունը, եթե մասնակիցը կարող է ընթացակարգին մասնակցել օրինակ մի կամ երկու չափի ստենտով կամ կաթետեր ախտորոշիչով կամ բալոնով, սակայն մի չափաբաժնով պահանջվում են մի քանիսը, ապա արհեստականորեն սահմանափակվում է մասնակիցների շրջանակի ընդլայնումը: Այսպիսով, ներկայացված չափաբաժինների տեխնիկական բնութագրերը ներկայացված են նույն տրամաբանության մեջ: Մեկ չափաբաժնով պահանջվում է բուժպարագա տարբեր չափերի: Պատվիրատուն պետք է յուրաքանչյուր չափը ներկայացներ առանձին չափաբաժնով, որպեսզի ապահովեր հնարավոր մասնակիցների մասնակցությունը և բացառվեր չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Պատվիրատուի ներկայացրած տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում օրենքով սահմանված նորմերին և հայտատուի համար ստեղծում են ապակողմնորոշող իրավիճակ:

Բողոքի քննության ընթացքում բողոքաբերի և Պատվիրատու կողմից ներկայացված վերոնշյալ հանգամանքները համադրելով գործով ձեռք բերված ապացույցներին ու փաստական տվյալներին, ինչպես նաև դրանք դիտարկելով սույն որոշմամբ արված վերլուծությունների ու եզրահանգումների համատեքստում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորման կիրառման համար՝ անկախ հիմնավոր լինելու կամ չլինելու և հիմնավորվածության աստիճանի (օբյեկտիվ հանգամանքներից ելնելով), Պատվիրատուն պետք է նախ և առաջ հաշվի առնի Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և Կարգի 22-րդ կետով նախատեսված դրույթները՝ հնարավոր մասնակիցների համար ապահովի մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Նշված դրույթների կիրառումն ապահովելուց հետո նոր միայն Պատվիրատուն կարող է առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները խմբավորել մեկ չափաբաժնում՝ հիմնավորելով խմբավորելու անհրաժեշտությունը, դրա օրինաչափությունն ու հիմնավորվածությունը՝ ելնելով օբյեկտիվ պատճառներից ու այլընտրանքային՝ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաների տարբեր չափաբաժիններում ներառելու հնարավորության բացակայությունից:

Ուստի, վերը նշված եզրահանգումներով պայմանավորված՝ բողոքով ներկայացված հիմնավորումներով և վերլուծությամբ հրավերի 1-9-րդ չափաբաժիններում փոփոխություններ կատարելու մասին պահանջն ենթակա է բավարարման մասնակիորեն՝ հրավերի նշված չափաբաժինների մասով գնման առարկա հանդիսացող բնութագրերն ենթական են փոփոխման սույն որոշմամբ նշված հիմքերով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 01.03.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/11 ծածկագրով բողոքը մասնակիորեն:

Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին կատարել սույն որոշմամբ նշված փոփոխությունները: Փոփոխություն կատարելու անհնարինության դեպքում գնման ընթացակարգը՝ 1-9 չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**